ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2
№ ՇՀԾՁԲ-7/10-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30 -ը հունվարի 2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Դահոս" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Դալլաքյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 10.04.2015թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 2 750 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 10.12.2017թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Դահոս" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/հ 2052222057131001
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00884034
ՀՀ պաշտպանության նախարարության	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 1

№ ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՋՈՒ զորամասերի համար

Հ/Հ	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/Մ	Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝							
	1. ՁՈՒ զորամասեր՝Գույքի/վերանորոգում							
	1.1 Բանջարեղենի կոնտեյների վերանորոգում							
1	1 գծամետր մետաղական կարկասի ուղղում	գ/մ	2304	2 419	2 661	3 060	3 672	4 517
2	1 գծամետր մետաղական կարկասի փոխարինում նորով	գ/մ	5742	6 030	6 632	7 627	9 152	11 257
3	1 գծամետր փայտե մասերի փոխարինում նորով	գ/մ	5742	6 030	6 632	7 627	9 152	11 257
4	1 գծամետր մետաղական կարկասի ներկում	գ/մ	1728	1 814	1 996	2 295	2 754	3 388
	1.2 Հենակետում սննդի պահպանման արկղի վերանորոգում							
1	Փականի վերանորոգում	հատ	3447	3 620	3 981	4 578	5 494	6 758
2	Փականի փոխարինում նորով	հատ	6894	7 238	7 962	9 156	10 988	13 515
3	Ծխնու վերանորոգում	հատ	3447	3 620	3 981	4 578	5 494	6 758
4	Ծխնու փոխարինում նորով	հատ	6894	7 238	7 962	9 156	10 988	13 515
5	Դռան փոխարինում նորով	հատ	34470	36 193	39 810	45 784	54 941	67 578
6	Դռան հերմետիկի փոխարինում նորով	հատ	5742	6 029	6 632	7 626	9 152	11 257
7	Պատերի հարթեցում 1մ2	մ2	5742	6 029	6 632	7 626	9 152	11 257

	Մատուցվող ծառայության անվանումը	Չ/Մ	Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	2. ՁՈՒ զորամասեր՝Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելուջրի բաքի վերանորոգում							
1	3/4 դյույմանոց նիկելապատ ջրի ծորակի փոխարինումը նորով	գ/մ	3600	3 780	3 742	3 928	4 124	4 330
2	3/4 դյույմանոց ջրի ծորակից դեպի ջրի բաք տանող խողովակի ամրացում, եռակցում	գ/մ	9000	9 450	9 922	10 418	10 939	11 486
3	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված ոտքերի ամրացում, եռակցում	գ/մ	22500	23 625	24 806	26 046	27 349	28 716
4	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված կափարիչի ամրացում, ծխնիների եռակցում	գ/մ	13500	14 175	14 884	15 627	16 409	17 229
5	Ջրի բաքի կափարիչի տեղադրում	հատ	4500	4 725	4 961	5 209	5 420	5 742
6	Ջրի բաքի դեֆորմացված մակերեսի ուղղում	հատ	4500	4 725	4 961	5 209	5 420	5 742
7	Ջրի բաքի կափարիչի ռետինե հերմետիկի ամրացում	հատ	3600	3 780	3 969	4 167	4 375	4 594
	Ընդամենը՝ առավելագույն գումարը	2 750 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ						

Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2017թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ (բայց ոչ ուշ քան 10.12.2017թ.) եռամսյակներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊՕ
...ԱՐԱՊԵՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դահու" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ 2052222057131001
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 2

№ ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի N 2 համաձայնագրի

ՎճԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2017թ											
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝												
1	Գույքի վերանորոգում				750000	750000	750000	1500000	1500000	1500000	1500000	1500000	1500000
2	Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում				625000	625000	625000	1250000	1250000	1250000	1250000	1250000	1250000

CPV-ի կոդը՝ 50881300/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարության
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Վ. ԱՍՏՎԱԾԱՏՐՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դաիոս" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/հ 2052222057131001
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 1
№ ՇՀԾՁԲ-7/10-4 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 29-ը հունվարի 2016թ.

ՀՀ պաշտպանության նախարարության դեմ՝ ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Դահոս" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Դալլաքյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, հիմք ընդունելով 10.04.2015թ. կնքված № ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 1.2 և 7.1 կետերը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Սույն Համաձայնագրով Կատարողը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ձևով Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն), իսկ Պատվիրատուն (Ստացողը) պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար:

2. Համաձայնագրի գինը և վճարման կարգը

2.1 Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության միավորի գինը ներկայացված է Համաձայնագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Համաձայնագրի առավելագույն գինը կազմում է 2 750 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Պատվիրատուն մատուցված Ծառայության դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 4.2 կետին համապատասխան, բայց ոչ ուշ, քան 25.12.2016թ (Հավելված N 2):

3. Այլ պայմաններ

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ծառայության մատուցման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը կազմված է 3 թերթից, հայերեն լեզվով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի № 1,2 Հավելվածները բաղկացած են 2 թերթից և հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Դահոս" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/h 253100013320-0010
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00884034
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-ՆՏԱ դեպարտամենտի պետ	տնօրեն
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 1
№ ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՁՈՒ զորամասերի համար

ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	ՉԱՄ	Միավորի գինը ըստ հեռավորության ՀՀ դրամ					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝							
	1. ՁՈՒ զորամասեր՝ Գյումրի վերանորոգում							
	1.1 Բանջարեղենի կոնտեյների վերանորոգում							
1	1 գծամետր մետաղական կարկասի ուղղում	գ/մ	2560	2 688	2 957	3 400	4 080	5 019
2	1 գծամետր մետաղական կարկասի փոխարինում նորով	գ/մ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
3	1 գծամետր փայտե մասերի փոխարինում նորով	գ/մ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
4	1 գծամետր մետաղական կարկասի ներկում	գ/մ	1920	2 016	2 218	2 550	3 060	3 764
	2 Հենակներում սննդի պահպանման արկղի վերանորոգում							
1	Փականի վերանորոգում	հատ	3830	4 022	4 424	5 087	6 105	7 509
2	Փականի փոխարինում նորով	հատ	7660	8 043	8 847	10 174	12 209	15 017
3	Ծխնու վերանորոգում	հատ	3830	4 022	4 424	5 087	6 105	7 509
4	Ծխնու փոխարինում նորով	հատ	7660	8 043	8 847	10 174	12 209	15 017
5	Դռան փոխարինում նորով	հատ	38300	40 215	44 237	50 872	61 046	75 087
6	Դռան հերմետիկի փոխարինում նորով	հատ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
7	Պատերի հարթեցում 1մ2	մ2	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	ՉԱՄ	Միավորի գինը ըստ հեռավորության ՀՀ դրամ					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	2. ՁՈՒ զորամասեր՝ Հենակներ 200-ից 300լ, տաքդողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում							
1	3/4 դյույմանոց նիկելապատ ջրի ծորակի փոխարինումը նորով	գ/մ	4000	4 200	4 158	4 365	4 583	4 812
2	3/4 դյույմանոց ջրի ծորակից դեպի ջրի բաք տանող խողովակի ամրացում, եռակցում	գ/մ	10000	10 500	11 025	11 576	12 155	12 763
3	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված ոտքերի ամրացում, եռակցում	գ/մ	25000	26 250	27 563	28 941	30 388	31 907
4	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված կափարիչի ամրացում, ծխնիների եռակցում	գ/մ	15000	15 750	16 538	17 364	18 233	19 144
5	Ջրի բաքի կափարիչի տեղադրում	հատ	5000	5 250	5 513	5 788	6 078	6 381
6	Ջրի բաքի դեֆորմացված մակերեսի ուղղում	հատ	5000	5 250	5 513	5 788	6 078	6 381
7	Ջրի բաքի կափարիչի ռետինե հերմետիկի ամրացում	հատ	4000	4 200	4 410	4 631	4 862	5 105
	Ընդամենը՝ առավելագույն գումարը	2 750 000 (երկու միլիոն յոթ հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ						

Ծառայությունների մատուցումը կիրականացվի 2016թ. 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ (բայց ոչ ուշ քան 20.12.2016թ.) եռամսյակներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դահիս" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/հ 253100013320-0010
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 2

№ ՇՀԾՁԲ-7/10-4 գնման պայմանագրի N 1 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	*Նախատեսվում է ֆինանսավորել 2016թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 25.12.2016թ										
		փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝											
1	Գույքի վերանորոգում	375000	375000	750000	750000	750000	1125000	1125000	1125000	1500000	1500000	1500000
2	Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում	312500	312500	625000	625000	625000	937500	937500	937500	1250000	1250000	1250000

CPV-ի կոդը՝ 50881300/1/4/1

* *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրամյան 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գանձապետական վարչություն
Հ/Հ 90001114[illegible]
ՀՎՀՀ 0086[illegible]5
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօրեն

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դահոս" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/հ 253100013320-0010
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՇՀԾՁԲ-7/10-4

ք. Երևան 10 -ը ապրիլի 2015թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Դահոս" ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Հ. Դալլաքյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետև՝ Ստացող) մատուցել հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի Հավելված N 1-ի, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայության արդյունքը և վճարել դրա համար (Հավելված N 2):

1.2 Հաջորդող տարիներին նախատեսված Ծառայության մատուցումը կիրականացվի անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում, համաձայնագիր կնքելու միջոցով: Կատարողը պարտավոր է համաձայնագիրը կնքել՝ դրա վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Կանխավճար նախատեսվելու դեպքում Կատարողը պարտավոր է ներկայացնել կանխավճարի ապահովում: Ապահովումը ներկայացվում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալուց հետո հինգ օրվա ընթացքում: Հակառակ դեպքում գնման պայմանագիրը Պատվիրատուի կողմից այդ մասով միակողմանի կլուծվի: Այն դեպքում, երբ սույն պայմանագիրը կնքելու օրվան հաջորդող տարվա ընթացքում նշված ծառայությունների մասով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվի՝ պայմանագիրը այդ մասով կլուծվի:

1.3 2015թ. համար նախատեսված Ծառայության մատուցումը կիրականացվի մինչև 2015թ. դեկտեմբերի 20-ը:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարներն, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից (Ստացողից) պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել փոխհատուցել իրեն պատճառված վնասները և վճարելու սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժն, եթե Պատվիրատուն բազմիցս խախտել է ծառայության համար վճարման պայմանները:

2.4 Կատարողն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.2 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Ծառայությունների առնվազ յոթանասունհինգ տոկոսը մատուցել անձամբ:

2.4.6 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.Ծառայության հանձնման և ընդունման կարգը

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) ստորագրմամբ: Կատարողը Ծառայության մատուցման ավարտից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին կամ Ստացողին է ներկայացնում մատուցված Ծառայության(Ծառայության առանձին փուլի) մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (Հավելված N 3):

3.2 Արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.2.1 Պատվիրատուն (Ստացողը) հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 (հինգ) օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայության արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3 Պատվիրատուի(Ստացողի) կողմից Կատարողի մատուցած Ծառայության արդյունքը ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու (հաստատելու) պահից:

4.Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կողմից մատուցվելիք Ծառայության յուրաքանչյուր միավորի գինը ներկայացված է պայմանագրի անբաժանելի մասը կազմող Հավելված N 1-ում: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Պայմանագրի առավելագույն գինը կազմում է 8 642 523 (ութ միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2 750 000 ՀՀ դրամի Ծառայությունը կմատուցվի 2015թ., իսկ 5 892 523 ՀՀ դրամի Ծառայությունը՝ անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում՝ կնքվող համաձայնագրով սահմանված ժամկետում:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ այն երկկողմ հաստատելու պահից՝ 15 բանկային օրվա ընթացքում:

5.Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայությունների մատուցման որակի, օգտագործված նյութերի որակի և սույն պայմանագրով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.2 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Ծառայության արդյունքը չընդունվելու, ինչպես նաև սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի առավելագույն գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայությունը մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ Պայմանագրի չկատարված մասի գնի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը: Պատվիրատուն պայմանագրով ֆինանսական պարտավորություններ ստանձնում է այդ գնումն իրականացնելու համար պահանջվող ֆինանսական հատկացումներ նախատեսված լինելու դեպքում և այդ հատկացումների շրջանակներում:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

2) սույն պայմանագրով նախատեսված Ծառայության շուկայական գների ավելի քան քսան տոկոսով փոփոխման դեպքերի: Շուկայական գների որոշման և դրանց փոփոխության գնահատման կարգը 31.10.2011թ. № ՊՆ 510-1354 գրությամբ նախապես համաձայնեցված է ՀՀ ֆինանսների նախարարության հետ:

Արգելվում է սույն պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող գնման առարկաների միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը.

7.3 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ Կատարողին հաղթող ճանաչելու (ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողը պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.4 Սույն Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող և (կամ) Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) և (կամ) կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N2 և N3 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.7 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը::

7.9 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	"Դահոս" ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ք. Երևան, Քանաքեռ 16թ., 5/1 տուն
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/հ 253100013320-0010
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 00884034
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Լ. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 1
N ԾՀԾՁԲ-7/10-4 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՋՈՒ զորամասերի համար

ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	ՉՄ	Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝							
	1. ՋՈՒ զորամասեր՝Գեղարքի վերանորոգում							
	1.1 Բանջարեղենի կոնտեյների վերանորոգում							
1	1 գծամետր մետաղական կարկասի ուղղում	գ/մ	2560	2 688	2 957	3 400	4 080	5 019
2	1 գծամետր մետաղական կարկասի փոխարինում նորով	գ/մ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
3	1 գծամետր փայտե մասերի փոխարինում նորով	գ/մ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
4	1 գծամետր մետաղական կարկասի ներկում	գ/մ	1920	2 016	2 218	2 550	3 060	3 764
	1.2 Հենակետում սննդի պահպանման արկղի վերանորոգում							
1	Փականի վերանորոգում	հատ	3830	4 022	4 424	5 087	6 105	7 509
2	Փականի փոխարինում նորով	հատ	7660	8 043	8 847	10 174	12 209	15 017
3	Ծխնու վերանորոգում	հատ	3830	4 022	4 424	5 087	6 105	7 509
4	Ծխնու փոխարինում նորով	հատ	7660	8 043	8 847	10 174	12 209	15 017
5	Դռան փոխարինում նորով	հատ	38300	40 215	44 237	50 872	61 046	75 087
6	Դռան հերմետիկի փոխարինում նորով	հատ	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
7	Պատերի հարթեցում 1մ2	մ2	6380	6 699	7 369	8 474	10 169	12 508
ՀՀ	Մատուցվող ծառայության անվանումը	ՉՄ	Միավորի գինը ըստ հեռավորության /ՀՀ դրամ/					
			Մինչև 50 կմ	50-100 կմ	100-200 կմ	200-300 կմ	300-350 կմ	350 կմ-ից ավելի
	2. ՋՈՒ զորամասեր՝Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում							
1	3/4 դյույմանոց նիկելապատ ջրի ծորակի փոխարինումը նորով	գ/մ	4000	4 200	4 158	4 365	4 583	4 812
2	3/4 դյույմանոց ջրի ծորակից դեպի ջրի բաք տանող խողովակի ամրացում, եռակցում	գ/մ	10000	10 500	11 025	11 576	12 155	12 763
3	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված ոտքերի ամրացում, եռակցում	գ/մ	25000	26 250	27 563	28 941	30 388	31 907
4	Ջրի բաքի կոտրված, դեֆորմացված կափարիչի ամրացում, ծխնիների եռակցում	գ/մ	15000	15 750	16 538	17 364	18 233	19 144
5	Ջրի բաքի կափարիչի տեղադրում	հատ	5000	5 250	5 513	5 788	6 078	6 381
6	Ջրի բաքի դեֆորմացված մակերեսի ուղղում	հատ	5000	5 250	5 513	5 788	6 078	6 381
7	Ջրի բաքի կափարիչի ռետինե հերմետիկի ամրացում	հատ	4000	4 200	4 410	4 631	4 862	5 105
	Ընդամենը՝ առավելագույն գումարը		8 642 523 (ութ միլիոն վեց հարյուր քառասուներկու հազար հինգ հարյուր քսաներեք) ՀՀ դրամ					

2015թ. համար նախատեսված ծառայությունների մատուցումը կիրականացվի 2015թ. 2-րդ, 3-րդ և 4-րդ եռամսյակներում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի տնօր.

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դահոս" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16/1, 5/1 տուն
«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/հ 253100013320-0010
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀՇՁԲ-7/10-4 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկան	*Նախատեսվում է ֆինանսավորել 2015թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ քան 25.12.2015թ		
		2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
	Հանրային սննդի կազմակերպման սարքերի վերանորոգման և պահպանման ծառայություններ, այդ թվում՝			
1	Գույքի վերանորոգում	705 000	1 140 000	1 500 000
2	Հենակետի 200-ից 300լ. տարողության չժանգոտվող պողպատից խմելու ջրի բաքի վերանորոգում	587 500	950 000	1 250 000

- *Վճարման ենթակա գումարը ներկայացված է ամբողջական կարգով:*

CPV-ի կոդը՝ 50881300/1

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ք. Երևան Բագրևանդի 5
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011144079
ՀՎՀՀ 00867415
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

"Դահիս" ՍՊԸ
ք. Երևան, Քանաքեռ 16փ., 5/1 տուն
«Պրոկրեդիտ» ՓԲԸ
Հ/հ 253100013320-0010
ՀՎՀՀ 00884034
տնօրեն

Հ. ԴԱԼԼԱՔՅԱՆ

Հավելված N 3
N ԾՀԾՁԲ-7/10-4 պայմանագրի

Պատվիրատու

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ _____

_____

հվհհ _____

Կատարող

_____

_____

գտնվելու վայրը _____

հհ_____

_____

հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

«____» «_____» 20 թ.

Պայմանագրի անվանումը՝ _____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն՝ ի դեմս _____ և Կատարողն՝ ի դեմս_____, հիմք ընդունելով, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները (այսուհետև՝ Մատակարարում) համապատասխանում են պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Կատարողը _____ 20___թ-ից _____ 20__ թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Մատակարարումները

Գնման առարկայի անվանումը	Գնման առարկայի քանակական ցուցանիշը	Ծառայությունների մատուցման ժամկետը	Վճարման ենթակա գումարը (հազար դրամ)	Վճարման ժամկետը (ըստ ժամանակացույցի)
Ընդամենը				

Վերոհիշյալ Մատակարարումների իրականացման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը մատուցեց

_____

ստորագրություն

_____

Ազգանուն, Անուն

Կ.Տ.

Ծառայությունը ընդունեց

_____

ստորագրություն

_____

Ազգանուն, Անուն

Կ.Տ.